Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային
կենտրոնի տնօրեն
_____ Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԲԱԺԻՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
2017 թ.

Ասպիրանտուրայի բաժինը հաշվետու տարում կազմակերպել և իրականացրել է 2017-2018 թթ. ՀՀ ԳԱԱ առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելությունը: Արդյունքում ընդունվել 10 առկա և 10 հեռակա ուսուցմամբ ասպիրանտ: Վճարովի հիմունքներով ընդունվել է 2 (արտերկրացի) ասպիրանտ:

Տարեսկզբին ԳԱԱ ասպիրանտուրայում պետական պատվերով սովորում էր 165 ասպիրանտ, այդ թվում՝ 89-ը առկա, 76-ը հեռակա, վճարովի հիմունքներով՝ 14 ասպիրանտ, որից 9-ը արտերկրացի: Հաշվետու տարում ավարտել է 58 ասպիրանտ՝ 28-ը առկա, 25-ը հեռակա և 5 արտերկրացի:

Ներկայումս պետպատվերով սովորող ասպիրանտների ընդհանուր թիվը 132 է, 75-ը առկա, 57-ը հեռակա: Վճարովի հիմունքներով սովորող ասպիրանտների թիվը 8-ն է, որից 4-ը՝ արտերկրի քաղաքացիներ են: Հայցորդների թիվը 247 է. 143-ը՝ վճարովի, 127-ն՝ անվճար (ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

Հաշվետու տարում որակավորման քննություններին նախապատրաստելու և դրանք հանձնելու նպատակով ասպիրանտների և հայցորդների համար կազմակերպվել են զարնանային և աշնանային դասընթացներ "Օտար լեզու" (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն), "Ինֆորմատիկա" և "փիլիսոփայություն" առարկաներից:

Տարվա կտրվածքով քննություններ են հանձնել՝ օտար լեզվից՝ 49, ինֆորմատիկայից 68, փիլիսոփայությունից՝ 63 ասպիրանտ և հայցորդ: Հաշվետու տարում պաշտպանվել է 62 թեկնածուական ատենախոսություն, որից 31-ը հաշվետու

տարում ավարտած ասպիրանտների կողմից, 5-ը արտերկրացի ասպիրանտների և 26-ը հայցորդների կողմից:

Բաժնը հաշվետու տարում կատարել է "ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ասպիրանտուրայի ընդունելության, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման" կանոնակարգի լրամշակում՝ ներառելով ՀՀ ԿԳ նախարարության և ԲՈՀ-ի կանոնակարգերում կատարված փոփոխությունները: Կատարվել է ասպիրանտների և հայցորդների ուսումնական գործընթացի, ընթացակարգերի պատրաստման գիտակրթական ծրագրի մեթոդական փաստաթղթերի, պայմանագրերի և եզրափակիչ ատեստավորման կազմակերպման կանոնակարգի վերամշակում: Մասնակցել է «Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների սեփական քաղաքականության» ու համապատասխան ընթացակարգերի մշակման աշխատանքներին:

Պատրաստվել և տրվել են տեղեկանքներ՝ որակավորման քննությունների մասին ԲՈՀ ներկայացվող (80 տեղեկանք) և զինկոմիսարիատներին ներկայացվող պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տրամադրելու վերաբերյալ (90-ից ավելի 26 ձև):

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պահանջով կազմվել են ԳԱԱ գիտական կազմակերպություններում հաշվետու տարում ընդունված, սովորող և ավարտած ասպիրանտների, դոկտորանտների, հայցորդների թվաքանակի և շարժի վերաբերյալ ամփոփ հաշվետվություններ՝ համաձայն «Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» և «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման» ձևի և կարգի:

2018-2019թթ. ուսումնական տարվա անվճար տեղերի ձևավորման համար համակարգվել և ՀՀ ԿԳ նախարարություն են ներկայացվել ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների կողմից ներկայացված ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի հայտերը:

Հաշվետու տարում ամփոփիչ հաշվետվություններով բարեհաջող եզրափակել ենք "Վերիտաս՝ Զալցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթության երրորդ մակարդակի կառուցվածքային զարգացում" ծրագրի աշխատանքները: